



## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ

21/01/2020

Քաղաք Երևան, հունվարի քսանմեկ, երկու հազար քսան թվական

Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 24-ի «Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդ ստեղծելու, խորհրդի կազմը և գործունեության կարգը, խորհրդի կազմում ներգրավվող հասարակական կազմակերպությունների մրցույթի և ռոտացիայի կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2015 թվականի ապրիլի 18-ի N 300-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 808-Ն որոշումը՝ ՀՀ արդարադատության նախարարությունում 2020 թվականի հունվարի 21-ին անցկացվեց Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կազմում ներգրավման նպատակով հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված փաստաթղթերի ամբողջականության և համապատասխանության ստուգում՝ ՀՀ արդարադատության նախարարի՝ 2020 թվականի հունվարի 9-ի թիվ 3-Ա հրամանով ստեղծված Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կազմում հասարակական կազմակերպությունների ներգրավման գործընթացի իրականացման նպատակով ստեղծված հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) անդամների մասնակցությամբ:

#### ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝

Սրբուհի Գալյան

Արդարադատության նախարարի տեղակալ,  
(Հանձնաժողովի նախագահ)



